

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2018-12-45

**«ԵՐԵՎԱՆԻ ՄԻԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐԱՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ**

24-ի ՆԻՍՏԻ

«Երևանի Միխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊԲՀ) ռեկտորատի 2018 թվականի դեկտեմբերի 24-ի նիստի մասին ծանուցվել էին ռեկտորատի բոլոր 26 անդամները:

Նիստին ներկա էին ռեկտորատի 26 անդամները:

Հրավիրված էին տնտեսական վարչության պետ Ս. Բարոյանը, կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնի ղեկավար Ա. Հայրապետյանը, քոլեջի տնօրեն Ա. Համբարձումյանը, կլինիկական աշխատանքների կազմակերպման վարչության պետ Ա. Ավագյանը և ԵՊԲՀ-ի այլ աշխատակիցներ:

Օրակարգ

- Ուսանողների հարց
Զեկուցող՝ Մ. Հայրապետյան
- Հավելվածների կիրառումը բարձրագույն բժշկական կրթության մեջ
Զեկուցող՝ Ս. Քոչարյան
- Ընթացիկ հարցեր

ԵՊԲՀ -ի ռեկտոր Ա. Մուրադյանը բացեց նիստը և քվեարկության դրեց օրակարգը:

Օրակարգը հաստատվեց միաձայն:

Անցնելով օրակարգի առաջին հարցին ուսումնամեթոդական վարչության պետ Մ. Հայրապետյանը ներկայացրեց այն 97 ուսանողներին, ովքեր մեծաթիվ անհարգելի բացակայությունների համար ներկայացված է նախազգուշացման:

Հարցը դրվեց քվեարկության:



Բաց քվեարկության արդյունքը հետևյալն էր՝ 26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշվեց՝ հավանություն տալ 97 ուսանողների մեծաթիվ անհարգելի բացակայությունների հիմքով նախազգուշացում հայտարարելու առաջարկին:

Մ. Հայրապետյանը ներկայացրեց նաև 59 ուսանողներին, ովքեր մեծաթիվ անհարգելի բացակայությունների համար ներկայացված են նկատողության:

Հարցը դրվեց քվեարկության:

Բաց քվեարկության արդյունքը հետևյալն էր՝ 26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշվեց՝ հավանություն տալ 59 ուսանողների մեծաթիվ անհարգելի բացակայությունների հիմքով նկատողություն հայտարարելու առաջարկին:

Անցնելով օրակարգի հաջորդ հարցին գիտության վարչության պետ Ս. Քոչարյանը ներկայացրեց ինտերնետային հավելվածների կիրառումը բարձրագույն բժշկական կրթության մեջ:

Դեկանները ներկայացրեցին իրենց ղեկավարած ֆակուլտետներում ընթացիկ աշխատանքները:

Ստորաբաժանումները ներկայացրեցին իրենց ընթացիկ աշխատանքները:

Քննարկվեցին նաև այլ ընթացիկ հարցեր:

Օրակարգը սպառված լինելու հիմքով ռեկտոր Ա.Մուրադյանը ռեկտորատի նիստը հայտարարեց փակված:

ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԱԽԱՎԱԾ

ՌԵԿՏՈՐ՝

ՌԵԿՏՈՐԱՏԻ ՔԱՆՏՐՈՂԱՆ



Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Մ.ՍԻՄՈՆՅԱՆ